/

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Այրք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացած՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Այրք-Ներքին Շորժա-Վերին Շորժա բնակավայրերի հարակից տարածքներում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2025թ-ի հուլիսի 4-ին, ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Այրք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի՝ Այրք-Ներքին Շորժա-Վերին Շորժա բնակավայրերի հարակից՝ 68 քառ. կմ. մակերեսով տարածքներում նախատեսվող <<ԳԵՈԱՐՄ>> ՍՊ ընկերության կողմից իրականացվող երկրաբնական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել <<Առավոտ>> օրաթերթի՝ 2025թ-ի հունիսի 4-ի հերթական համարում:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝ Այրք բնակավայրի վարչական ղեկավար՝ Կամո Ղազարյանը և բնակիչները, Ներքին Շորժա և Վերին Շորժա բնակավայրերի բնակիչները, Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական՝ Ալիկ Եղիազարյանը, <<ԳԵՈԱՐՄ>> ՍՊ ընկերության տնօրեն՝ Ռուբեն Առաքելյանը:

Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական Ալիկ Եղիազարյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև խոսքը փոխանցեց <<ԳԵՈԱՐՄ>> ՍՊ ընկերության տնօրեն՝ Ռուբեն Առաքելյանին:

<<ԳԵՈԱՐՄ>> ՍՊ ընկերության տնօրեն Ռուբեն Առաքելյանը ողջունեց քննարկման մասնակիցներին և տեղեկացրեց, որ տվյալ տարածքներում երկրաբանական աշխատանքներ կատարվել են դեռ հազար ինն հարյուր ութսունական թվականներին: Վերջին երկրաբանակ աշխատանքների հաշվետվությունը թվագրվում են հազար ինն հարյուր ութսունութ թվին: Այդ հաշվետվությունները ուսումնասիրելով ակնկալվում է, որ տվյալ տարածքներում կհայտնաբերվի հանքավայր:

Ռուբեն Առաքելյանը ներկաներին տեղեկացրեց, որ նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունները ընդանուր աշխատանքների առաջին փուլն են կազմելու և տևելու են երեք տարի, որոնց նպատակը լինելու է պարզել արդյոք այդ 68 քառ. կմ. մակերեսով տարածքում հնարավոր է հանքավայր հայտնաբերել: Տվյալ տարածքներից վերցվելու են նմուշներ և ուղարկվելու են լաբորատոր փորձաքննության և ըստ

արդյունքների տարածքը բաժանվելու է տեղամասերի և ավելի մանրամասն երկրաբանական աշխատանքներ են կատարվելու այն տարածքների վրա, որտեղ փորձաքննության արդյունքները ավելի բարձր ցուցանիշ են ապահովելու:

Ռուբեն Առաքելյանը ներկաներին տեղեկացրեց նաև, որ տեղանքում աշխատելու են երկրաբանների խումբ, ովքեր տեղակայվելու են տվյալ տարածքն ընդգրկող երեք բնակավայրերից մեկում: Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ են լինելու բանվորներ և վարորդ, որոնց ընդգրկելու են տեղի բնակչությունից:

Հետագայում աշխատանքի ծավալների մեծացման զուգընթաց ավելի շատ մարդիկ՝ տեղի բնակչությունից կնդգրկվեն աշխատանքներում:

Քննարկմանը մասնակից Այրք բնակավայրի բնակիչ՝ Սարգիս Գալստյանը իրեն հուզող հարցը ուղղեց <<ԳԵՈԱՐՄ>> ՍՊ ընկերության տնօրեն՝ Ռուբեն Առաքելյանին:

Հարց.

- Ինչ հանքավայրի հայտնաբերման են ուղղված նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունները:

Պատասխան.

- Կանխատեսվում է, որ տեղանքում պետք է լինի մետաղական հանքավայր՝ ոսկի-բազմամետաղ:

Քննարկմանը մասնակից բնակիչները ողջունեցին նախաձեռնությունը:

Բնակիչների կողմից առարկություններ չհնչեցին և Ալիկ Եղիազարյանը ավարտեց քննարկումը:

Քննարկումների վարող և պատասխանատու՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական Ա. Եղիազարյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝

<<ԳԵՈԱՐՄ>> ՍՊ ընկերության տնօրեն Ռ. Առաքելյան

Հանրային լսում Այրք բնակավայր

Նպատակ՝ « ԳԵՈԱՐՄ» ՍՊԸ-Ի կողմից Վարդենիս համայնքի Այրք Վերին Շորժա, Ներքին Շորժա բնակավայրերի հարակից տարածքներում ուսումնասիրություններ կատարելու վերաբերյալ առաջին հանրային լսում:

Ամսաթիվ՝ 04.07.2025թ.

N	Անուն, Ազգանուն	Համայնք	Բնակավայր	Պաշտոն	Ստորագրություն
1.	[illegible]	«[illegible]» ՍՊԸ		[illegible]	
2.	[illegible]	«[illegible]» ՍՊԸ		[illegible]	
3.	[illegible]	Վարդենիս	Այրք	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	Այրք	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible]	Այրք	[illegible]	
7.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	
9.	[illegible]	[illegible]	Այրք	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	Այրք	[illegible]	
11.	[illegible]	Վարդենիս	[illegible]	[illegible]	
12.	[illegible]		Վարդենիս	[illegible]	

13.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
14.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
15.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
16.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
17.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	AK
18.	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
19.					
20.					
21.					
22.					
23.					
24.					
25.					
26.					
27.					
28.					